

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղարկոյ համար
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 »

Արտասահմանի հա-
մար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

Անկերիկայի համար
Տարեկան 2.50 ռր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Մանուցման տոյր ստաթիկ
երեսին համար 40 սանթիմ
հ. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ հ. երեսին
տեղի անգամներու համար
20 Օ10 գեղջ կրոյայ :

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԺ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեյ
Խմբագրութեան հասցիին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չիւ սրուիք

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Ա Չ Դ

Յառաջիկայ սեպտ. 19ին նոր
թաղ. խորհրդի մը ընտրութեան
պիտի ձեռնարկուի Սահմանադ-
րութեան օրէնքի համաձայն .
ուստի այս տոթիւ թախանձագին
կը խնդրեմ արգոյ հասարակու-
թեանն որ բարեհաճին ազգասի-
րաբար Ս. Պատարագի աւարտու-
մէն քիչ ետք, նոյն օրը Ազգ.
վարժարան գալ :

Ամէն անոնք որ ընտրելու ի-
րաւունք ունին կը սիրեմ յու-
սով որ ներկայս իբր հրաւիրա-
գիր համարելով, փութան հան-
դէպ ազգին ունեցած պարտքեր-
նին յիշեալ օրը խղճի մ.օք կա-
տարելու :

Մնամ աղօթարար
Տէր Մարտիրոս Մարտիրոսեան
Վառնա, 9 Սեպտեմբեր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

(ՔԱՆԻ ՍՄԱԳՐԱԿԱՆԸ)

Թէեւ հասարակական կարծիքը
սկսում է ընտելանալ այն փոքրիկ
խաղին՝ հրաժարականի առաջադ-
րութեան և մերժումի, որի մէջ
ներկայումս սահմանափակվում է
Սուլթանի և հայոց Պատրիարքի
արտաքին յարաբերութիւնները,
այնուամենայնիւ չէ կարելի չը
չեղտել ներկայ դէպքը որ պայ-
թեց Գուլ-Պարուի և Երլտըլի
մէջ :

Ասում են թէ այս անգամ Ն. Ս.
Օրմանեան անկեղծաբար և բոլոր
սրտով ուզում է զործերից ետ
քաշվել, ինչպէս որ առաջ բաղ-
ձացել էր երբէք ասպարէզ չիշ-
նել : Ազգային ժողովն էլ, իր
կողմից, միաձայնութեամբ միա-
ցել է Պատրիարքի այս քայլին :

Ըստ երեւոյթին այս մի լուրջ
տագնապ է, որը երեւան է դա-
լիս այնպիսի մի վայրկեանում,
երբ հայոց Պատրիարքը պէտք է
արժանանար Սուլթանի լուրջ և
իրական բարեհաճ երախտագի-
տութեան :

Չէ որ Օրմանեան համաձայնեց
գիմել Լահէի ժողովին հայերի և

երիտասարդ թուրքերի դիմում-
ների համար զգուշացնելու այն
գիւղամասներին, որոնք վե-
հանձնութեան հրապուրանքնե-
րին շատ քիչ ենթակայ են : Սրա-
նով Պատրիարքը հաւատացեալ-
ների պետին լաւ կեանքի և բար-
քի մի տեսակ վկայագիր տուց
և համարձակօրէն հաստատեց թէ՛
Անատոլիի մէջ կարգը վերահաս-
տատված է և ազգաբնակչութիւնը
գոհ է :

Թերեւս Օրմանեանի այս քայ-
լից առաջացած ամօթի զգաց-
մունքը կծու իւզի պէս կանգնեց
նրա կողորդում և հրաժարականի
ծարաւը զարթեցրեց նրա մէջ :

Այնինչ այս քայլը պէտք է ա-
պահովեցնէր իր տիրոջ Սուլթանի
երախտագիտութիւնը, եթէ մի-
այն վեհապետները ընդհանրա-
պէս, իսկ Սուլթանի Համիտը մաս-
նաւորապէս, իրանց սրտի ան-
կախութիւնը բարեմասնութիւն
դարձրած չը լինէին, գոնէ քա-
ղաքական բարեմասնութիւն :

Ինչպէս և լինի, կիսանկեղե-
ցական և կիսավարչական խուլ
ընդհարումները հասցրին այնպիսի
մի անտանելի վիճակի՝ որ հայե-
կեղեցական և ազգային իշխա-
նութիւնները պէտք համարեցին
իրենց հրաժարականը տալ :

Հաւանական է որ հալածանք-
ների վերսկսումը, որոնց զոհերը
Հայաստանի դժբախտ բնակիչ-
ները են, կազմում է հրաժարա-
կանի քողարկված պատճառներից
մէկը : Շարունակաբար ամենա-
յուզիչ լուրերը լսվում են այդ
չարատանջ ազգաբնակչութեան
վիճակի մասին : Գրեթէ, քա-
ղաքներում իրենց անպատիժ մնա-
լով, վերսկսել են իրենց հա-
րստահորութիւնները մնացորդ
հայերի դէմ : Ասում են թէ վեր-
սկսվել են և կոտորածները, առ
այժմ սահմանափակ կերպով :

Թուրք իշխանութիւնները փո-
խանակ պաշտպանելու այնքան
տանջված և դժբախտ ժողովրդի
մնացորդը, արտաքսում են որ-
բերին և նրանց ապաստարան-
ները ոչնչացնում, մասնաւորա-
պէս Տիգրանակերտ, Ատանայ և
Բիթլիզ . նրանք բոլորովին ան-

տարբեր են դէպի ազգաբնակու-
թիւնը և այդ անտարբերութիւ-
նից դուրս են գալիս միայն այն
ժամանակ՝ երբ պէտք են զգում
նոր խտուրթիւնների դիմել ազ-
գաբնակչութեան դէմ :

Այս իրողութիւնները պէտք է
յայտնվին ոչ միայն նրա համար
որ Եւրոպան հասկանայ իր պա-
տասխանատուութեան չափը նախ-
քան թոյլ տալը որ կրկնվեն Հա-
յաստանի առջի սարսափները,
եթէ պէտք է կրկնվի այդ խայ-
տառակութիւնը, այլ և նրա հա-
մար, որ հասարակած կարծիքը չը
չլանայ նիւթական շահերով և
Ասիական թուրքերի երկաթուղի-
ները շինելու շահաւէտ դաշնա-
գրերով :

Մեզ յայտնի չէ թէ Պատրիար-
քը և Ազգային ժողովի անդամ-
ները համարձակվել են արդեօք
համեստ կերպով ակնարկել այն
փաստերի վրա որոնք շատ ծանօթ
և խօսակցութեան նիւթ են Պոլ-
սում :

Յամենայն դէպս Սուլթանը,
ըստ երեւոյթին, տրամադիր չէ
ուղղակի կերպով տագնապ դի-
մաւորել այն տագնապը որ պէտք
է առաջանայ Պատրիարքի և Ազգ.
ժողովի հրաժարվելով : Տրամա-
դիր չէ և ձեռք առնել անհրա-
ժեշտ միջոցներ, որոնցով կը վե-
րանային Պատրիարքի դժգոհու-
թեան պատճառները և հայ ժո-
ղովրդի մնացորդները փոքրիկ
ապահովութիւն կստանային :

Այս վերջի կէտի իրականալուծ
հաւատացող չը կայ. գուցէ միայն
նրանք, որոնք չափ ունեն հաւա-
տացող ձեւանալու այնպիսի մի
բանի, որը հերքվում է ամեն-
քից :

Իսկ ինչ վերաբերում է առա-
ջինին՝ Աբդուլ Համիդը դիմել է
իր սիրած երկգիմի միջոցներից
մէկին . նա չէ ընդունել հրաժա-
րական և կազմել է մի յանձնա-
ժողով երեք անդամներից՝ ո-
րոնցից երկուքը բարձրաստիճան
թուրքեր են իսկ երրորդը հըռ-
չակաւոր հայ փաշա Արթին Դատ-
եան . և յանձնարարել որ քննեն
Պատրիարքի և ազգային ժողովի
բողոքը, ու համաձայնութեան
հիմքեր գտնեն :

Ով որ փոքր ի շատէ ծանօթ է
թրքական գործերի ընթացքի
հետ, նրա համար ահա և մի
թաղված գործ :

Յայտնի է թէ ինչ արժեք և
ինչ հետեւանքներ են ունենում
այդ տեսակ քննութիւնները :

Մարդիկ, որոնց յանձնարար-
ված է այս քննութիւնները, կէս
խօսքով հասկանում են իրանց
տիրոջ ցանկութիւնները :

Արթին փաշա Դատեանը չէ որ
կը պատռէ այն քողը, որի
տակ խնամքով ծածկված են իր
ազգի ցաւերը . և նա չէ որ ա-
րիւար իր ձեռքը կառնի ազ-
գային դատը՝ արտասանելով ան-
հրաժեշտ խօսքերը՝ հայերին
բաւականութիւն տալու, քիսս-
վածներին վարձատրելու, չարա-
գործներին պատժելու և բարե-
նորոգումները մտցնելու համար :

Գուցէ Բարձրագոյն Դրան ար-
խիւի մէջ մի նոր տեղեկագիր
եւս աւելնայ . Պատրիարքը և
ազգային ժողովը կենթարկվեն
այս կակուղ բռնութեանը և կը
մնան իրանց տեղերում :

Անկասկած այս միջոցներով չէ
որ չարատանջ հայ ժողովուրդը
կը դադարի մարտիրոսանալուց
և դժբաղդ թուրքիան կը վերըս-
տանայ մի քիչ կարգ, ազատու-
թիւն և խաղաղութիւն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 10 Սեպտեմբեր

Պատրիարքնու հրաժարուիլը
անցեալ անգամ գրեցի : այժմ
կուգամ աւելցնելու որ վեհա-
պետնիս յանձնախումբ մըն է
կազմել տուեր, որ հայոց «Պատ-
րիքի» հրաժարականի պատճառ-
ները քննէ : Ըստ ոմանց խումբը
կազմուած է 5, իսկ ըստ եւրո-
պական այսօրուան թերթերու
(Ն. Յ. Բ.) երեք հոգի է, որոնցմէ
միայն մէկ անդամն հայ է, Ար-
թին փաշան, ան ալ Աստուած
հայ համարէ . . .

Իսկ Օրմանեան առ այժմ փակ-
ուած է իր տանը մէջ, պաշտօնա-
վայր չի շնար և միայն պաշտօ-
նական գրութիւնները կը ստու-
րագրէ :

Բոսովայի վիլայեթէն գէշ լուրեր կը հասնին: Բրիտաններն լուր վիճակը խիստ նեղ է: Ալպանացի յայտնի աւագապետ Տիմ. Պուրիան վերջերս յարձակուեր է էշաքեապից և Պապլիաք գիւղերու վրայ, կատորեր, կողոպտեր և փախեր է:

Վրէժ կամ արդարութիւն չըլլար իր դէմ, որովհետեւ տեղական միւֆտին իրեն բացարձակ պաշտպանն ու գործակիցն է:

Մախուսէի «Թայիֆ» նաւը շաբաթ մը առաջ ասկէ դէպի Ղարաթարապուլուզ մեկնեցաւ 30 հոգի արտարականներ տանելով: Այդ 30էն 26 հոգին Երևուզի պալատին մէջ զանազան դաւադրութիւններու և կասկածներու համար դատապարտուածներ էին. ամէնքն ալ թուրքեր:

Ռուսական զեսպան Ձինովիէֆ նորէն խիստ դիմումներ կընէ Բ. Իրան Ռուս-Թրքական սահմաններու վրայ քիւրտերու կողմէ կատարուած անկարգութիւններու առթիւ, յանցաւորներու պատժուելը կը պահանջէ, իսկ մեր բարեխնամ կառավարութիւնը ականջները բամպակ խոթած է...

ԲԱԺ

Փրովիսկես, 5 Սեպտ.

Երեք չորս օրերէ ի վեր հայոց բնակարաններու պատերուն փակցուած էին Հայ Յեզ. Դանակցութեան Փրովիսկեսի զօմիտէի հրաւիրագիրը յայտարարութիւնը Սեպտեմբեր 3ի երեկոյեան, փու-

թացինք երթալ հրապարակային ժողովին ներկայ գտնուիլ: Չնայելով օդի ճնշող լինելուն ժողովարար հը լեցուած էր երկսեռ խուռն բազմութեամբ մը ժողովը բացուեցաւ «Դրօշակ» բօթարքեր թիւ 6ի Բաղէշի նամակի (ինչպէս նաեւ Վանի նամակի) ընթերցումով, որ կը գումէր Գուրգէնի և իր խմբի հերոսական նահատակումը. հետաքրքրական էր տեսնել թէ հայ ժողովուրդը ինչպէս ցաւակցական «ա՛խ»եր ու հառաչներ կարձակէր իր նահատակ հերոսներու տխուր բայց փառաւոր մահուան համար: Ատկէց վերջ խօսեցաւ, Պոթոմէն հրաւիրուած, Պ. Ա. Ս. Լեւոնեան, պերճաստութեամբ բարձրացուց յեղափոխութիւնը և զօրաւոր կերպով փաստեց թէ՛ յեղափոխութիւնը փաստակար չըլլալէ զատ՝ շատ օգտակար եղած է, և առաջ բերաւ յեղափոխականներու յաղթութիւնները ու ազգին առած օգուտը:

Յետոյ բեմ ելաւ պուլկարիացի մի երիտասարդ. առաջին անգամն էր որ կը տեսնէինք, օտարազգի, պուլկարի մի տղա, որ հայուն ցաւին ցաւակից ըլլալով յեղափոխական ժողովի մէջ, հրապարակաւ կոչ կընէր հայ երիտասարդներուն, որ իրենց վիճակին գիտակից ըլլան, ու շուտով յեղափոխութեան փարին: Մեր օտար բարեկամը, անգլիերէն գրաւոր ճառով մը խօսեցաւ մեզ. երիտասարդը հայերէն միայն խօսիլ գիտեր, զուրկ էր գրել կարգալէ, և կերեւի այդ պատճառաւ անգլիերէն էր գրած իր

ճառը: Մենք հրապարակաւ կը ծափահարենք և շնորհակալութիւննիս կը յայտենք, մեր պուլկար բարեկամին, որ մեզ ձեռք կուտայ այս թշուառ վիճակնուս մէջ, և կոչ կընենք բոլոր փոտած հայ անուն կրող արացուններուն, որ գէթ օրինակ առնեն պուլկար տղայէն և դադարին հայ ազգի բեռ ըլլալէ...

Վերջին ատենախօսն եղաւ Պ. Թ. Չարչաֆճեան (նիւ Եօրքէն հրաւիրուած) որ ազգու և փաստացի կերպով ցուցուց թէ մեր ազգի յեղափոխութիւնը ընելը բնական և անհրաժեշտ էր. անհրաժեշտ է նոյնպէս շարունակելը. ու աւելցուց թէ յեղափոխութեան ճանապարհէն կիսատ դառնալ ու զղջումի դալը տեսակ մը դաւաճանութիւն է ազգին, ինչ որ ոմանք կընեն. և առաջ բերաւ շատ մը իմաստասէրներու խօսքերն, ինչպէս Կալիլէյի պատմութիւնը, որ «աշխարհը կը շարժի, կը դառնայ» ըսելուն պատճառաւ տգէտ կառավարութիւնը ու կղերները բռնած կրակով այրած են զինքը, որպէս զի իր «ցնդած, սխալ» համոզումը չի քարոզէ, բայց կալիլէյ աշխարհը կը շարժի, գնդակի մը նման կը դառնայ, ըսաւ ու ճշմարիտ համոզումին համար այրեցաւ և յաղթանակը տարաւ. ու այսպէսով հետեւցուց և ըսաւ թէ՛ հայ յեղափոխականներու մէջ միայն Դանակցութիւնը իր կոչումին ու համոզումին վրա անխախտ մնաց, և միայն այն է որ կալիլէյի նման կրակի մէջ կայրի ու չի դաւաճաներ յեղափոխական

սկզբունքներուն, և միշտ առաջ կերթայ. ու, կրակի մէջէն՝ այս է միայն ազատութեան ճանապարհը կը գոչէ: Հայ ժողովուրդը միայն այսպէս կամքի և սկզբունքի տէր կուսակցութենէ մը իր փրկութիւնը յուսալու է:

Վերջին երգն ալ երգուելով ուրախ և լաւ տրամադրութեան տակ մեկնեցանք տուն:

4.

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Հետաքրքրութեամբ կարդացի Շարժումի մէջ Պ. Կ. Պիօնի «Քննութեան վիճակները» գրութեամբը: Այդ մասին արդէն տեղիս մատարանական Բնկարութեան» սրահին մէջ մի դասախօսութիւն կարդացել եմ, համոզուելով թէ քննութիւնները ընդհանրապէս վնասակար են: Լիւրաւ թաղի երկսեռ դպրոցներ Պ. Տեսուչը եւ ուսուցչական ամբողջ խումբը ինձ հետ համաձայն լինելով, որոշեցին հրապարակային քննութիւն չանել, ինչպէս որ ժամանակին արդէն զրել է ձեր Թաւրիզի մասնաւոր թղթակիցը: Այդ խնդրի հետ կապակցութիւն ունեցող մաքի չափազանց յոգնածութեան մասին իտալացի երեւելի դիտուում-պրօֆէսօր Ա. Մոսսօյի գրքից վերջին գլուխը թարգմանելով եւ մի քանի ուրիշներէ կարծիքներն էլ մէջ բերելով կազմեցի այս յօդուածը: յուսամ թէ թերթիդ մէջ լոյս տեսնելով կարող է օգտակար գտնաւ շատերի համար:


Դոկտ. Կ. Յ. Փաշայեան

Թաւրիզ, 23 Օգոստոս

—)(—

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄՏԱԻՈՐ ԱՆԻԱՏՈՒԹԵԱՆ
ՉԱՓԱՉԱՆՅՈՒԹԻՒՆ ԿԱՍ
ՄՏՔԻ ՈՒՍՏՊԱՆՈՒԹԻՒՆ



Ա.

«Եթէ տարւայ չափազանց եւ յուսահատեցուցիչ ուսուցանելով անձս փնացուցի, այն միջոցում, երբ զարգանալու էի եւ կազմուածքս ամրացրեցի էր հարկաւոր:» Ժակ Լեօպարտի այս մի քանի խօսքերը հրաշալի կերպով ամփոփում են այն ամենը, ինչ որ կարելի է ասել ուղեղային չափազանց աշխատութեան մասին: Երբ գերազանցօրէն բարի հոգին ուղում էր ուրիշներին զոգուցանել այն չարիքից, որով նա իր երիտասարդութեան ժամանակ տխրալի կերպով տանջվել էր: Այս պատճառով քսան տարեկան հասակում, երբոր նա իր Ռեկանատիու փոքր կալուածից դուրս եկաւ եւ նախնիքներէ յատուկ բնակարանը թողեց, որտեղ երիտասարդութիւնը անց էր կացել, հեծում էր, ինքնիրան առանց եռոսնդի էր զգում, խոկմունքից ու ժասպոսած, կարգաւոր եւ անքուն գիշերներէից տկարացած:

Ալէքսանտր Հուսթոլտ իրա հա-

մար ասում էր. «Տասնեւեթ տարեկան էի, եւ ոչինչ չէի իմանում. ուսուցիչներս իմ ապագայի մասին ոչ մի լաւ բան չէին գուշակում. բայց, եթէ նրանց մեթոտներին հետեւէի, եւ եթէ նրանց պահանջումներին հպատակվէի, մարմնս ու միտքս յաւիտեան քանդուած էին: Այս երկու օրինակները մէջ բերի որովհետեւ այնտեղ տեսնվում է որոշապէս գնահատուած, մտքի ու ժամապատութեան (սիւնտիլիս) աղէտալի ազդեցութիւնը, սկսած այս դարի զկզկից: Եւ միայն այս վերջին տարիներումս է, որ բօիչնիքի եւ առողջաբաններէ ու շաղրութիւնը դարձաւ մասնաւորապէս այս աղէտների վրա, որ ուղեղային չափազանց աշխատութիւնը կարող է առաջ բերել մեր երեխաների ուղեղում: Կարծում եմ 1877 թուականին Նուրէմպէրկի առողջապահական կոնգրէսումն է, որ առաջին անգամ այս կէտի վրա գիտունները ուշադրութիւնը հրաւիրվեց: Կօնգրէսում այս վիճաբանութեան եզրակացութիւնը այն եղաւ, որ գերմանական դաստիարակութիւնը խանդարում էր մարմնի աճումը եւ գլխաւորաբար տեսողութեան զարգացումը, եւ միւս կողմից, ուղեղային աշխատութեան չափազանցութիւնը, որ ծայրայեղ էր, մասնակցներէ աճումը արգելում էր:

Գերմանացիները, իրանց լեզուի մէջ ունեցած նոր բառեր ստեղծելու

ղիւրութեան շնորհիւ, մտաւոր աշխատութեան այս չափազանցութիւնները ֆեքթորներուց կոչեցին, որ նշանակում է մտքի ծանրաբեռնութիւն: Անգլիացիները նրան օվրստրէյն եւ օվրլոսթ անուանեցին. եւ Քրանսացիները, ումասպառոքիւն, ուժաթափութիւն բառը անասնաբուժութիւնից փոխ առնելով, նրան մեքսիկո մակերը աւելացրին, (եւ մենք յարմար դատեցինք Քրանսացիներին հետեւելով հայերէնում կազմել մեքսի ումասպառոքիւն բառը): Ներկայումս, իտալերէնում մտաւոր չափազանցութիւնները նշանակելու համար գործածական բառ չունինք, հաւանականաբար, որովհետեւ ուրիշ երկիրների նման մեր հայրենակիցների ուշադրութիւնը այս խնդրի վրա այնքան ուժեղ կերպով չէ դարձած, որովհետեւ մեզ մօտ ուղեղի սկարացումը շատ հազուադէպ եւ քիչ յայտնի է: Ինձ թուում է թէ Ստրպուցօ Տիլ Չիլիքի բացատրութիւնը կարող է համապատասխանել մեր արտայայտելու ուղեղի չափազանցութիւնը վիճելու վրա չէ, պատճառը զանց առնելով. փափագում ենք միայն, ուղեղի ոյժերը չարաչար յոգնեցնող մի աշխատութիւնից յետոյ, ուղեղի վրա մտքի ու ժամապատութեան ներկործութիւնները ուսուցանելու:

Բ.
Իրանց ընտանիքի ծոցում վարած հանդարտ կեանքից զրկուած եւ զարոց զրկուած երեխաները սկզբում մի մեծ նեղութիւն չեն զգում եւ մտաւոր աշխատութիւնով չեն ուժաթափվում, որովհետեւ իրերի նորութիւնը նրանց զբօսեցնում է. բայց, վերջապէս նրանց ընդերկար սեւեռած ուշադրութիւնը սկսում է նրանց յոգնեցնել եւ ուժաթափել այնքան աւելի, որքան նրանց կազմուածքը տկար է. մենք մեզ համոզել կարող ենք այս հասակի յատուկ եղող գեղեցիկ վարդագոյնին յաջորդող զրգուցումութիւնը տեսնելով. երեխաները նուազ վարվում են, նուազ զուարթ են դառնում, ախորժակնին կորցնում են, շատ զիւրազրկու եւ շատ տխուր են լինում եւ գլխացաւից նեղվում են:
Պրօֆ. Ֆինքէլնբուրգ խնդրի գլուխաւոր կէտերը այսպէս է ամփոփում. «Տեսողութեան խանգարում եւ գլխաւորաբար կարճատեսութիւն, — գլխացաւերով յայտնուող ուղեղային արիւնհաւաքում, — քիչ արիւնահոսում եւ գլխացաւոյտ, — քամակոր գառնալու ձգտում, — անասնոթութիւն եւ վատ մարսողութիւն, — թոքի հիւանդութեանց արամադրութիւն, — ողնաշարի թեթեւ, — ուղեղային հիւանդութիւններ, — նեարդայնութիւն (նեւրոզիզմ), — զեռաստի աղբիկները լուսնի խանգարում»:

ՏՈՒՌ ԵՂԱՅ ՍԸ

Ոճրագործ լուծեամբ մը չեմ ուզեր նուիրագործել սա անձանօթ Եր. Ադամեանի սուտերը, որոնք երեւցան «Շարժում»ի 28 օգոստոս թիւին մէջ: Հայհոյանքները արհամարելով չեմ պատասխաներ այդքան զաղբելի նախատինքներու:

Այս նախաբանէն յետոյ անցնիմ սա տխուր տղուն, Գալֆաեանին, (մի շփոթէք ուրիշ Գալֆաեաններու հետ), ճշմարիտ ու մէկ հատիկ Գալֆաեանին, հայ Մօնսէ Սիւլիւի: Գիտէք անչուշտ դուք ալ, «Շարժում»ի ընթերցողներ, թէ աս անունով հոս Բարիկ հայ նշանաւոր ողբերգու մը ունինք. ու ես զժբախտութիւն ունեցայ նախատեսելու անձանօթ Ադամեանէն, որովհետեւ Գալֆաեանի հրէշային սուտերը պատմեցի ու իր արհեստական տաղանդին վրայ խնդացի: Չի մոռնամ յիշել թէ, այս տխուր տղան պաշտպանողներուն, պաշտողներուն մէջ, չգտայ մէկը որուն անունը լսած ըլլայի տեղ մը, և կամ կարգացած այս դէպքէն առաջ թերթի մը մէջ: Չեմ գիտեր ուրկից կուգան, ինչ կընեն:

Նախ ըսեմ ջրելու համար Պ. Ադամեանի սուտը, թէ Գալֆաեանի երկրորդ ներկայացման ներկայ գտնուեցայ ճիշդ այն իրիկունը որ «ընդհանուր խնդրանքի համաձայն» հայ արթիստը պիտի կրկնէր Օթէլլօն»: Չեմ զարմանար որ

Գալֆաեանի բազմաթիւ! Նիացողները զիս չտեսան, որովհետեւ ես ալ զիրենք չի տեսայ: Սրահին մէջ, ինչպէս արդէն գրած էի «Արևելք»ին, 15—20 հողիէն աւելի չէինք, որոնց մեծագոյն մասը, խնդալէն կը մարէր: Հրէշ Օթէլլօյին այլանդակութեան վրայ, ու մնացող մէկ քանի հայերուն հետ ամօթէս որ ծակը մտնալս չէի գիտեր: Այո՛, ներկայ գտնուեցայ այդ նշանաւոր ախուր երեկոյթին:

Գալֆաեան, հրապարակ իլաւ հրաւիրագիր ազգով մը, ֆրանսէրէն գրուած, ուր սա խոշոր սուտերը կային, «Պ. Գալֆաեան, համաւարտ հայ ողբերգու որ Պօլսոյ մէջ անմահացուցած է Շէյքսպիրը, և ուր ամբողջ ծրար մը ունէր թատերախաղերու, ստիպուեցաւ ձգել իր Պօլսոյ թատրոնը ու Բարիկ փախչիլ հայտնի դժբախտութիւններէն յետոյ»:

Արդ, այս սուտը որի՞ կլլեցնել կուզէ Գալֆաեան պարունը: Իրաւունք չունի՞մ ըսելու թէ այդ մարդը ստախոս է, թէ երբէք Պօլսոյ մէջ թատրոն ունեցած չէ, թէ երբէք ներկայացում տուած չէ ոչ Պօլսոյ մէջ և ոչ ալ ուրիշ տեղ: Չեմ հասկնար թէ ինչպէս դաւաճան կը ըլլայ մէկը, այսքան անճոռնի սուտ մը երեւան հանելով: Բայց այս բաները հասկնալու համար Եր. Ադամեան կոչուելու չէ մարդ:

Այս սուտերուն վրայ շինուած մտաւորներով Գալֆաեան կրցաւ մտնալ մէկ քանի խմբագրատուն ու հոն, զժբախտ աքսորեալին

գլխով, գտնուեցան խմբագիրներ, որոնք «անանց ստորագրելու» (միշտ անձանօթներ) մէկ երկու տող գրեցին վրան:

Ահա այն հէքէրարին ալ, որով աշխարհի բոլոր գրուող ու խօսուող լեզուներու թերթերը մեծ դովետներով խօսեցան Գալֆաեանի վրայ:

Այս տեսակ խաբեբայութեամբ Գալֆաեան գտաւ մեկեաններ, որոնք օգնեցին՝ հաւատարմով թէ իրաւ արժանիք մը ունի: Շահուազբեր մը ըրաւ մեծ արթիստը սուտով ստակ գտնալը: Բայց եկաւ մեծ իրիկունը, Օթէլլօյի ներկայացումի իրիկունը: Հոն գտնուող բոլոր հայերը, խպնելով գուրս ելան: Անոնք պէտք չունէին ոչ Չօպանեանի և ոչ ալ իմ յօդուածներուս ըմբռնելու համար թէ խաբուած են: Մեկեանները կատողեցան, խաբեբային դիմակը ինկաւ:

Հիմա Գալֆաեան, ամէն կողմ ինկած, աղաչելով, պաղատելով կը գտնայ տակաւին անձանօթներ որոնք զինքը պաշտպանելու համար ճիգեր կընեն: Վստահեմ որ ատոնցմէ ոչ ոք տեսաւ Գալֆաեանը Օթէլլօյի մէջ:

Բայց ինչ որ չեմ հասկնար, քննադատելու իրաւունք չիտալնին է: Հրապարակ ելլող մը, գրող կամ դերասան, պէտք է գիտնայ թէ զինքը պիտի քննադատեն: Գալֆաեան այս բաներէն չը հասկնար, ինք միայն գովեստ կուզէ, զինքը չի փայտալողը ազգային մեծ դաւաճան է:

Ըսի ուրիշ տեղ թէ Գալֆաեան

ոչ միայն դերասանի ձեւեր չունի, նոյնիսկ կեղծ ձեւեր, ձգեւք արհեստական մասը, այլ նոյնիսկ խօսիլ, հայերէն խօսիլ, արտասանել անգամ չի գիտեր: Խուլ ըլլալու չէ իմանալու համար թէ Գալֆաեանի հայերէն արտասանութիւնը սոսկալի կերպով յոռի է. բառերուն կէսը կուտէ, միւս մնացած վանկերն ալ իրար խառնելով, անհասկանալի ձայներ միայն բերնէն դուրս կը թափին, որոնց ինչ լեզուի պատկանելին, իր բովանդակ ազգասիրութեամբ Պ. Եր. Ադամեանն անգամ չի պիտի կրնար կուահել:

Աս կարծիք մը չէ, իրողութիւն մըն է: Կարծիքներուս խօսքը չեմ ըներ, որովհետեւ պատուաբեր չեն Գալֆաեանը պաշտպանողներուն. այդ տխուր տղան, արթիստ չէ ծնած, արթիստ չի կրնար ըլլալ:

Կուզէի խաբուած ըլլալ, ու տեսնալ ապագային որ Գալֆաեան արթիստ մը եղած է: Ոհ, չեմ յուսար, կտրեցի իմ բոլոր յօյսերս այդ տղուն վրայէն: (*)

Պօղոս Բօթօյեան

Բարիկ, 3 Սեպտեմբեր

(*) Մի ընդարձակ յօդուած ստացած ենք ուրիշ պարունէ մը որ նոյնպէս կը պաշտպանէ Պ. Գալֆաեանը: Միւս համարի մէջ կը տպագրենք եւ այդպէսով այս հարցը փակուած կը լինի մեզ համար:

Մ. Խ.

Այս խնդիրը հազիւ բարձրացած, անհաշուելի թուով կոնգրէսներ, ակադէմիաներ, պարլամենտներ, մասնաժողովներ այսպէս յուզած խնդրով զբաղվցին: Արդէն այս խնդրի մասին մի ամբողջ գրականութիւն գոյութիւն ունի: Նոյնիսկ մասնաւոր թերթեր կան, ինչպէս Համբուրգում Քոտլիւանի հրատարակածը, որ յատկապէս զպրոցական առողջապահութիւնով են զբաղվում: Բէրլինի համալսարանում նոյնիսկ այս նիւթի մասին մի մասնաւոր դասընթաց կայ:

Ստոգոլում ֆիզիոլոգիայի պրոֆէսոր Աքսէլ այս մասին շատ կարեւոր մի գիրք է հրատարակած եւ Շվէյտալյում սրա կատարած քննութիւնները անհերքելի կերպով ցոյց են տալիս թէ ուսուցումը շատ յոգնեցողիչ է դառնում եւ թէ խնդիրը երեխաների փրկութեան վրայ է: Ինչպէս ամէն խնդիրներում, նոյնպէս եւ զպրոցական երեխաների ուղեղային աշխատութեան չափազանցութեան մասին հաստատութիւններ եւ բացատրութիւններ առաջացան: Մի վերջնական համոզում գոյացնելու համար առանց նախապէս բաւական նիւթեր հաւաքած լինելու, պաշտպանում կամ հարուածում են: Վերջերս հրատարակուած բազմաթիւ վիճակագրութիւնները իսկապէս չափազանց ցրված են:

Աքսէլ Բէյ ցոյց է տալիս թէ աւելի երեխաներին վնասում է երկա-

րատու անշարժութիւնն, այնպէս որ նրանց ազատապէս վազվզելու համար աւելի երկար ժամանակ պէտք է սալ եւ աւելի էլ երկար միջոց նրանց մարտդութեան համար:

Շվէտիական զպրոցներում կատարուած քննութիւններից հետեւում է: որ աշակերտների կէսը միայն կատարելապէս առողջ էր: Այս խնդրում մի անյաղթելի դժուարութիւն է ներկայանում. այն է, որ չենք իմանում թէ այս երեխաների մէջ որքան հիւանդներ պիտի գտնուէր եթէ ոչ մէկը զպրոց չգնար: Ինչ որ պակասում է, բուն միջին քանակի ծանօթութիւնն է այն. առողջ երեխայի մտատիպարը, աճել ու զարգանալու մէջ պիտի կայանար: Այնուամենայնիւ այս ուսումնասիրութիւնները կատարելը մեզ թոյլ տալու համար զպրոցը նրանց բացարձակապէս արգիլելը, բանաւոր չը պիտի լինէր:

Շվէտիայում, բարձրագոյն կարգի երեխաները տասն եւ մէկից տասն երկու ժամ աշխատում են. այս երեխաների 36 առ հարիւր տոմսնախտիկ (գրոստիֆ), արիւնի մի տեսակ խանգարում են, եւ 10 առ հարիւր թիւքած ողնաշար ունին: Կարճատեսութիւնը չը հաշուելով, Աքսէլ Բէյ գտաւ, որ Շվէտիայում եւ Գանիմարքայում երեխաների 40 առ հարիւրը քրոնիկ (երկարատեւ) ախտերի ենթակայ են. երեխաների այս ուժասպառումը եւ

այս աւերումը, նրա կողմից, շատ դժուար եւ շատ յոգնեցողիչ դասերի պատճառած մտաուժասպառման վերագրւած են: Անգլիայում, առողջապահական տեսակետից այս երկիրը բոլոր միւս երկիրներից որքան էլ բարձր լինի, երիտասարդութիւնը նմանապէս տանջվում է ուղեղային այն չափազանց աշխատութիւնից, որին ենթարկում են էլիմբուրգի համալսարանում մանկանց հիւանդութիւնների պրոֆէսոր Բէյլինտին քիչ ժամանակ առաջ Ալան-սթրոմ (բժշկական թերթ լօնդօնում) մի ուսումնասիրութիւն հրատարակեց Անգլիայում ուղեղային ուժասպառութեան վրա: Նա ասում է, որ, ըստ իրան, զպրոցում ակնունելի իրէջալը լինելու է ժամանակի հաւասար բաժանումը աշխատութեան եւ խաղերի մէջ, ֆիզիքական դաստիարակութիւն եւ մարմնական դաստիարակութեան մէջ, նա առաջարկում է, երեխաներին զիւղ ուղարկել երբ ծնողները վիստում են, որ նրանք իրանց դասերի ժամանակ քնում են: Ահաւասիկ գովտ. Բէյլինտինի այդ կարեւոր յօդուածի եզրակացութիւնները. — զպրոցի առողջապահական կարգադրութիւնները ամբողջացնել եւ աշակերտների ֆիզիքական զարգացման աւելի ուշադրութիւն դարձնել. — շատ աշխուշ կրթութիւն. աշակերտների ուշադրութիւնը վարժութեան մէջ պահելու համար խաղերի եւ դասերի ու

րոչ եւ փոխնիփոխ ժամեր. — կարգադրութիւններ որպէս զի երեխաները խոնաւ ոտքով դասի հետեւելու վտանգում չը գտնուին. — դասարանները համար տեղի յաճախակի փոփոխութիւններ. — բացատրող պատկերների գործածութիւն. — արձակուրդների միջոցում դասերի ջնջում:

Յիշուելիք լաւագոյն փորձերից մին Անգլիայում Չարլս Պաշտիկաւատարան է: Մի դասարանի առաջադիմութիւններից նուազ գոհ, նա մտածեց երկու բաժանմունքների բաժանել: Սրանցից մէկը հին ուղեղութեան հետեւեց, միւսը խաղերի եւ աշխատութեան միջեւ հաջատարապէս բաժանւած: Գպրոցական շրջանի վերջումը, այն բաժանումը, որ խաղերի եւ աշխատութեան միջեւ հաւասարապէս բաժանուած ժամանակն ունէր, միւս բաժանումից զերազանցում էր թէ ջանասիրութեան եւ թէ գիտութեան կողմից: Մանաւանդ զիմնազիւանների եւ ճեմարանների մէջ է, որ մտքի ուժասպառութիւնը զոհեր է տանում: Համալսարանում, բացի քննութիւնների ժամանակամիջոցից, կարելի է ասել, որ դասերի ընթացքում հանգիստը չէ պակասում:

Գոլիս. Կ. Փաշայեան

(Շարունակելի)

ՆՈՐԱՆՏՐԵԼԻ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԳԸ

Մեծաւ ուրախութեամբ կարգացինք Տէր Մարտիրոս Հօրազարարութիւնը տեղոյս թաղ. Խորհրդոյ ընտրութեան մասին, վերջ մը տալու համար տեղոյս ազգային իշխանութեան անկերպարան վիճակին, որոյ շնորհիւ ազգային բոլոր գործերը երեսի վրայ թողուած են ցարգ և գըզըրոցաց հոգաբարձութիւնը ստիպուած է երկու մեծ պաշտօններ միանգամայն վարել, ինչ որ հակառակ է օրէնքի դիմաց:

Այս ամէնուն պատճառը եղած է կարգ մը անձերու կամայականութիւնները, որով ժողովուրդը բաժնած է ոչ սակաւ կուսակցութիւններու և սկսած ազգային գործերու վրայ խորթ աչքով նայիլ: Կարճ, զանազան անձնական ստոր հաշիւներու համար զոհուած է ամէն ինչ որ սուրբ և բարենպատակ է. մէկ իօսքով, այս ազան միւս ազայէն վար շննալու համար:

Թաղ. Խորհրդոյ ձեռքն է ազգային բոլոր գործերուն բարեկամ վատ մատակարարութիւնը. այդ պաշտօնին մէջ պէտք է գտնուին պարտաճանաչ, բարոյական ու քիչ շատ ուսեալ անձնաւորութիւններ, թէեւ դեռեւս շատ բաներ կը պահանջուի, բայց մենք քիչով կը գոհանանք:

Ժողովուրդը համոզուած է թէ այդ պաշտօնը ստանձնողը անպատճառ պէտք է շատ տարիքոտ ըլլայ. ահա այս պատճառաւ ամեն թաղական ընտրուելուն կը տեսնուին միշտ միեւնոյն անձերը. անոնց մէջ բնաւ չի տեսնուիր որ գտնուի 34—35 տարեկան անձ մը:

Ինչ սխալ ըմբռնում միթէ՞ պէտք է քիչ մըն ալ տեղային օրէնքներու համաձայն վարուիլ. ինչո՞ւ համար սոսկալի նախապաշարման մէջ մնալ. միթէ՞ երիտասարդներու եռանդուն գործունէութիւն մը նախամեծար չի համարուիր կարգ մը փտած ազաներու քմահաճոյքներէն:

Ինչ կարող ենք սպասել այն անձերէն, որք ունէ կողմնակցութեան շնորհիւ կարժանանան ազգային իշխանութեանց մէջ սպրդիլ ու հետեւեալ օրը կը ստիպուին յուսախարութեամբ ետ քաշուիլ, որովհետեւ հակառակ կուսակցութիւնը ստակ չի վճարեր:

Մենք ալ լաւ կըմբռնենք թէ ազգային տուրքը ամէնուս համար ալ նուիրական պարտականութիւն մըն է, բայց որու հասկցնել միթէ մենք օրէնքներ ունինք, կրնանք ճնշում բանեցնել ժողովրդեան վրայ կառավարութեանց պէս ստակ հաւաքելու համար. ոչ Վենք կը հրաւիրենք

հայ հասարակութիւնը որ իր քուէն տայ այնպիսի անձնաւորութիւններու, որոնք իսկապէս կարող լինին գոհացնել այդ պաշտօնին պահանջները և միեւնոյն ժամանակ համակրելի լինին ամբողջ ժողովրդեան:

Unerus-Unerus

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տփլիսի Փրիտօնեան եղբայրները Պ. Ջանշեանի հրատարակած ժողովածոյի միջոցաւ 1000 բուպլի նուիրեր են գաւառացի եարօտեալներու:

— Նպաստից Թանձնաժողովը որոշեց է շրջաբերական մը գրել բոլոր որբանոցներուն, պատուիրելով որ բարերարաց կողմէ կամ Պատրիարքարանէ իրենց համար սահմանուած գումարէն դուրս որ և է ծախք չընեն, դիտնալով որ Պատրիարքարանը որ և է պատասխանատուութիւն շտանձնեց հանդէպ այս կարգի պարտքերու:

— Զմիւռնիոյ առաջնորդը վերջոտին գրած է Պատրիարքարան թէ՛ վիճակին մէջ գտնուող խել մը կարօտ գաղթականներու նըպաստելու և որբանոցներ պահելու ստիպուած ըլլալով, չի կրնար Պատրիարքարանէ յանուն կարօտելոց և որբանոցներուն ուղած նպաստները տալ:

— Նպաստից Թանձնաժողովը գաւառներէն հասած գրութիւնները աչքէ անցընելով, որոշած է Տիրապէքի, Պաշ-Քալէ և Մալթիա դրամական նպաստ զըրկել:

Ի նկատի առնելով Պաշ-Քալէի որբերու խղճալի վիճակը, որոշած է յանձնարարել շուտով յանձնաժողով կազմել որոշուած որբանոցին բացման համար գործողութիւնները փութով կատարելու:

— Տիրապէքի բանտը գըտնուող կարօտելոց համար 30 ոսկիի նպաստ մը զրկուեր է:

— Յոյն նպարավաճառ մը առնելիքի պատճառաւ ելեր դատ բացեր է Խասգիւղի Գալֆաեան Որբանոցին դէմ, և իր պահանջը հաստատելով, ուզեր է մաս մը գոյք արգելքէ տակ առնել. բայց, մէկ երկու անձեր միջամտելով այս գործողութեան առաջը առեր և այս պահանջի խնդիրը իրաւախօսութեամբ կարգադրեր են:

— Բոլորովին նեղ վիճակի մէջ մեռնող Ալէաթեան եպիսկոպոսի երկու սնտուկէն 30 և 15 ոսկի գտնուեր է. ինչպէս կերելի, եպիսկոպոսները միայն այն ժամանակ նեղ վիճակի մէջ են, երբ հարկերէն անդին չուեն: Այսուամենայնիւ Քրիզօրիոս Սըրբազանը իրաւունք ունի աչքատ համարուելու: Եւ մենք ալ համարենք:

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տրէյֆիւս ներուած է. Բէնի բանտէն աննկատելի կերպով դուրս ելած է և ճամբայ ինկած դէպի Նանթ. Յայտնի չէ թէ ուր պիտի հաստատուի:

— Տրէյֆիւսի ներման օրը երկարատեւ հիւանդութենէ վերջը մեռաւ անոր դատը կրկնուելուն գլխաւոր դրդիչը. Պ. Շէօրէր Բէստնէր, ծերակոյտի անդամ:

— Պօլսոյ Ռուսական դեսպանատան սուրհանդակը կը ձերբակալուի ոստիկաններէն և կը տարուի Գալաթա-Սարայ, բայց ճամբան կը յաջողի փախչիլ և մանալ Ռուսական դեսպանատան: Զինովիէֆը խիստ բողբ մը կը ներկայացնէ Սուլթանին այս իրաւանց բռնաբարման դէմ, որ զբաղուած լինելով քանի մը ուլէմներու խռովեցուցիչ գործերով, Սէլամըքէն վերջը, ըստ իր սովորութեան, չէր ընդունած հանդէսին ներկայ գտնուող օտար դեսպանները:

— Պուտալէշթի մէջ ընկերվարականները 17 ժողով աւնեցեր են օգուտ ընդհանուր մարդկութեան ցտերը բառնալու խնդրին: Այս ժողովներէն երեքը խանդարուած են ոստիկաններու կողմէն, որովհետեւ ճառախօսները ծայրայեղ խտուրթեամբ խօսեր են:

— Թաշկէնթի մէջ ռուս զնդապետ Սթախեսքի, բեվօլքերի հարուածով մը սպաներ է «Թուրքէսթան. Ռուս» թերթին խմբագիրը, որովհետեւ վերջինս խիստ կերպով քննադատած էր զնդապետին գունդը:

— Զին կառավարութիւնը խիստ բողբած է ժէնէրալ Օթիսին դէմ, որովհետեւ վերջինս Ֆիլիպինի կղզիներէն արտաքսած էր Զինները: Զին կառավարութիւնը ժէնէրալին այս վարմունքը երկու պետութեանց մէջ եղած լաւ յարաբերութեանց գէշ հարուած մը կը համարէ:

Արտոքսման այս խնդիրը ներկայացուած էր Մաք-Քինլիին, որովհետեւ միջազգային քաղաքականութեան կը դպչի:

— Ժէնէրալ Օթիս հեռագրած է թէ՛ ժէնէրալ Մաք Արթիւր Անթէլէսի մէջ ընդունած է Ֆիլիպինցի երկու սպաներու այցելութիւնը, որոնք եկած էին թոյլտուութիւն խնդրելու որ ամերիկացի գերիներն զրկեն Մանիլա և պատամը ժէնէրալ մըն ալ կայանալիք ժողովին մասնակցելու համար: Սպաները ստացած են այս թոյլտուութիւնը:

ԿԸ ՎՍԱՍՈՒՒՆ

Պուլկարական գործածուած ամէն տեսակ նամակագրողներ և բաց նամակներ:

Դիմել առ

Մուրուս Երանուսան (Վառնա)

—)(—

Ն Ս Մ Ս Կ Ա Տ Ո Ւ Փ

Մանուկ Սարաֆեան, Պիթլիսցի, մեր քովը Ամերիկայէն նամակ մը ունիք, բարեհաճեցէք գալ և ստանալ:

— Ռուսչուք, Պ. Գ. Տ. — Մենք այդտեղ արդէն վաճառող ունինք:

— Պուրկաղ, Գ. — Զեր նամակը փոստին յանձնուած է ձեր տուած հասցեով:

Ա Ջ Դ

Մինաս Բարեղեան, Ակնայ դիւղերէն, Հապուճէխցի, տարիքը 30, արհեստով առաջապարտ, երկայնահասակ և թուխ դէմքով, Ռուսմանիոյ կամ Պուլկարիոյ մէջ ըլլալ կը կարծուի. Հասցէն տեղեկութիւն ունեցողը թող հաղորդէ խմբագրութեանս:

ՎԱՐԿՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ)

(Գին 1 Փրանգ)

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Ծարժուի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտոն Կոչի ձօս, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը:

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՆԸ

Գաւառ-Բարիպաւն

Գրեց ԲԱՐԱ-ԴԱՍՊԱՐ

Պուլկարիոյ մէջ գինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ:

Ցանկացողները թող դիմեն Ծարժուի խմբագրութեան:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐ ՀԱՒԱԿԱՆՈՅ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Զարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ դպրոցական եւ վիպական գրքեր. գրամի փոխաբէն կընդունին նաեւ նամակագրողներ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրողներու:

ԽՄԱԿԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՓՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւտոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւռներ:

Գիները յոյժ գիւրամատչելի. Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ԹԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՍԻԿ

ԿՈՒՉԻՔ ՀԱՐՍՏԱՆԱԼ

Դիմեցէ՛ք

Մ. Թիւթիւնեան եւ ընկ.

Ի Ռուսչուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն Սօֆիա քաղաքի Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի սոմսակները:

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին:

Печатница „Взаимность“ Варна